

Ֆաթուլլանը հոլլիսին կրկին կտպագրի «Իրական Ադրբեջանը»

Հունիս 17, 2011

Ֆաթուլլանը հոլլիսին կրկին կտպագրի «Իրական Ադրբեջանը»

 [300_fatullayev.jpg](#) [1]

Ադրբեջանցի լրագրող Էյնուլլա Ֆաթուլլանը, որը չորս տարի անցկացրեց բանտում, պատրաստվում է հոլլիսին վերսկսել իր մասնագիտական գործունեությունը որպես ռուսալեզու «Իրական Ադրբեջան» թերթի գլխավոր խմբագիր: Այս մասին հայտնում է Kavkaz-uzel.ru [2]:

Ֆաթուլլանն ազատ էր արձակվել մայիսի 26-ին՝ համաձայն նախագահական համաներման:

Նա հայտնել է, որ ազատումից հետո նրա գործընկերներն ու բարեկամները խորհուրդ են տվել «ժամանակավորապես լքել երկիրը, հանգստանալ, մտածել ապագայի մասին»:

Սակայն լրագրողը կարծում է, որ հոգեբանորեն լիցքաթափվելու համար բավական է տասօրյա այցը Ստրասբուրգ, որտեղ նրան հրավիրել են Եվրոպայի խորհրդից:

Ֆաթուլլանը պատրաստվում է թերթի տպագրման համար ծախսերը հոգալ 27.000 եվրո փոխհատուցման շնորհիվ, որը նրան պետք է վճարվի համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

Սակայն այդ գումարը փոխանցվել է Ֆաթուլլանի հարկային պարտքերի հաշվին: Այժմ Եվրոպայի խորհրդի պատգամավորների հանձնաժողովը պահանջում է Ադրբեջանի իշխանություններից հանել այդ տուգանքը և վճարել Ֆաթուլլանին փոխհատուցման գումարը:

Աղբյուր: Kavkaz-uzel.ru [2]

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում ԼՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[ԼՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/node/1316>

Links:

[1] http://www.jnews.am/files/300_fatullayev.jpg

[2] <http://www.kavkaz-uzel.ru/articles/187314/>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>